



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» մայիսի 2023 թվականի N 92-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ղ.ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 5-ՐԴ ՇԱՐՔ N 16/1 ՀԱՍՑԵԻ 31.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք N 16 հասցեի 235.12 (երկու հարյուր երեսունհինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Լուսինե Դանիելի Քոչարյանին և Ջուլիետա Երանոսի Երանոսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26052020-08-0011 վկայական):

Քաղաքացի Լուսինե Դանիելի Քոչարյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21032023-08-0045 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք N 16/1 հասցեի 31.5 (երեսունմեկ ամբողջ հինգ տասներորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Լուսինե Դանիելի Քոչարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի փետրվարի 02-ին N 1987 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Քաղաքացիներ Լուսինե Դանիելի Քոչարյանին և Ջուլիետա Երանոսի Երանոսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք N 16 հասցեի 235.12 (երկու հարյուր երեսունհինգ ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Ղ.Ղուկասյան փողոց 5-րդ շարք N 16/1 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 31.5 (երեսունմեկ ամբողջ հինգ տասներորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես ընդհանուր բաժնային սեփականություն, բնակելի տունն ընդլայնելու նպատակով:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասնը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 331 191 (երեք հարյուր երեսունմեկ հազար մեկ հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լուսինե Դանիելի Քոչարյանին և Ջուլիետա Երանոսի Երանոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Կողմ (17)

Դեմ (0)

Ձեռնպահ (6)

Վ.Սամսոնյան
Գ.Մելիքյան
Լ.Սանոյան
Մ.Սահակյան
Տ.Հովհաննիսյան
Ն.Պողոսյան
Գ.Պասկևիչյան
Ս.Հովհաննիսյան
Խ.Վարաժյան
Հ.Ասատրյան
Ս.Խուբետարյան
Ա.Բեյբուտյան
Հ.Նիկողոսյան
Ե.Խանամիրյան
Շ.Արամյան
Լ.Մուրադյան
Հ. Ստեփանյան

Վ.Հակոբյան
Ս.Ադամյան
Կ.Սոսյան
Գ.Մանուկյան Կ.Ասատրյան
Հ.Մարգարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՆ**

**ԻՍԿԱԿԱՆԻՇԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ք. Գյումրի
«11» մայիսի 2023 թվական**



ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ՝ 20/06/2023

Փաստաթղթի N՝ Կ-20062023-08-0129

գաղտնաբառ՝ 98BD04Y7E7IY

Հայացկայնություն

ԼՈՒՍԻՆԵ ԲՈԶԱՐՅԱՆ ԴԱՆԻԵԼԻ

Անշարժ գույքի գրանվելու վայրը (հասցեն), անվանումը

Մարզ Ծիրակ, համայնք Գյումրի ք. Ղ. Ղուկասյան փողոց 5-րդ շարք 16/1 հողամաս

Ձև N 15/06/2023-39-0032 դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկարմամբ հարուցված իրավունքի պեղական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկարմամբ իրավունքների պեղական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքերով, քանի որ՝

1. Համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պեղական գրանցման մասին» ՀՀ օրենք 46-րդ հոդվածի 4.2 մասի՝ հողամասերի ընդլայնման նպատակով պեղական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման դեպքերում օտարվող և ընդլայնվող հողամասերը գրանցվում են որպես մեկ ընդհանուր անշարժ գույքի միավոր, առանց նախօրոք օտարվող հողամասի նկատմամբ՝ որպես անշարժ գույքի առանձին միավոր ձևով բերողների անվանը սեփականության իրավունքի նոր պեղական գրանցման, մինչդեռ ընդլայնվող՝ մարզ Ծիրակ, համայնք Գյումրի ք. Ղուկասյան փողոց 5-րդ շարք 16 թվականի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ-ի գրավի իրավունքը և համապատասխան սահմանափակումը՝ անհրաժեշտ է ներկայացնել վերջինիս համապատասխան համաձայնությունը:
2. Համաձայն ՀՀ Ծիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 05/06/2023 թվականի թիվ 1394-Ա որոշման՝ մարզ Ծիրակ, համայնք Գյումրի ք. Ղ. Ղուկասյան փողոց 5-րդ շարք 16/1 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը իրավատերերին օտարվում է որպես ընդհանուր համատեղ սեփականություն, մինչդեռ, համաձայն 15/06/2023 թվականին վավերացված գրանցամատյան թիվ 8059 հողամասի առուվաճառքի պայմանագրի՝ անշարժ գույքը ձևով է բերվում որպես ընդհանուր բաժնային սեփականություն /հատկացված չեն իրավատերերի բաժնեմասերը/:
3. Համաձայն մարզ

Շիրակ, համայնք Գյումրի ք. Ղ. Ղուկասյան փողոց 5-րդ շարք 16/1 հողամասն հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային գործի արխիվային նյութերի՝ այն հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամաս, մինչդեռ վերոհիշյալ պայմանագրում նշված է՝ հասարակական կառուցապատման: 4. Համաձայն մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ղ. Ղուկասյան փողոց 5-րդ շարք 16 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային գործի արխիվային նյութերի՝ այն բնդհանուր բաժնային սեփականության իրավունքով /յուրաքանչյուրին 1/2-րդ բաժնեմաս/ գրանցված է իրավատերերի անվամբ, մինչդեռ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 05/06/2023 թվականի թիվ 1394-Ա որոշման մեջ նշված է՝ բնդհանուր համատեղ սեփականություն:

Հասցեական համարակերտության կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի ուղղիստի Կարեն

Խանումյան

այս որոշումը հաստատված է էլեկտրոնային եղանակով՝ այն ընդունած պաշտոնատար անձի կողմից: